



21. ԶԻՑՐԱՆՆԵՐՆ ՍԱՐՈՒՄԸ

Խոտմա, լինում մին թաքավըներ։ Տրան իրեք տղա յա ինում, Մըռնելան առաջ տղորանցն ասում ա։—Հինչ տըեղ էլ քյինաբ, էսհինչ սարն անց լի կենաբ։ Հարը վըեր մըռնում ա, մըեծ տղան ասում ա։—Թյիննական ըմ տըեսնամ էտ սարումը հինչ կա, վըեր մեր հար ասալ ա քյինաբ վուզ։ Մին օր էլ տա հղե յա ինում, քյինամ։ Եշում ա, տըեսնում մին ջեյրան էտ սարումը։ Օզում ա թա շիյրաննեն ըսպանե, փախճում ա, մին հըսարու կըլիսավ լոր տամ, անց կենում։ Տղան հետան քյինամ ա հասարն անց կենում, մին մարթ ա տէն կյամ, տրան խափում, տանում մին օթաղ, կլնիսը կտրում, քցում պադվալը։

Էքյսի օրը մաշնակ ախպընը եշում ա, տըեսնում մըեծ ախպընը ետ կյամ լի, հետան քյինամ ա, համան տըեղն էն ջեյրանը պըտահում ա, օզում ա ըսպանե, ջեյրանը հըսարեն կըլիսավը լոր ա տամ, անց կենում, մարթ տըեռնում, կյամ տրան էլ խափում, տանում կըլիսը կտրում, քցում պադվալը։

Մին օրան ետը կումուր ախպընը ա քյինամ էտ սարը, համան ջեյրանը տէնս ա կյամ, նհետը կռւ ա անում, թխում ջեյրաննեն կըլիսը յարալու անում։ Ջեյրանը փախճում ա, հըսարավը լոր տամ, անց կենում, թաքավընըն տղան էլ հետան։ Տա եշում ա, տըեսնում մին մարթ կըլիսը կապած տէն եկավ ուրան առաջ։ Տղան զաստին կըլիս ա ինգյում, վըեր սա էն ջեյրանն ա, ուրան ախպընը սա յա ըսպանալը էտ մարթը տրան ասում ա։—

Եթ տոն, կընստես դինջանաս, նի կըմննես համամբ. մին լավ լրդանաս, տոնա կըկյաս հաց օտես, շայ խմես, ետնան քյինաս: Տա թա՝ տըես հըմամեն ճնէրը տաք ա”, նի մննեմ լրդանամ: էտ մարթը վըեր ծըեռքը տանում ա, թա տըեսնա ճնէրը տաք ա, թա քավը երեն տղան շաշկան դաստին տոն, ա օնում, տրա կլիսեն թիում, ըսպանում: Կլիսեն վըեսկուռեն կեսը կըտըրվում ա, կեսը մնամ:

Վըեսկուռեն հըվաքում ա, տանում հըսարան տոնա քցնմ մին փոս, տներեն պիլանիքը ջուրան յոր օնում, քյինամ պադվալը պեց անում, տըեսնում ուրան ախսպորցը կըլիզնեն տըեղ: Ետնան քյինամ ա ութըղնեն լոխ պեց անում, տըեսնում հի՞նչ վըսկեղան, արծաթ, հի՞նչ հարստություն... վըեր տի տըեսնում ա, ասում ա.—Իմ հոր հարստությունան շատ ա, ըստըեղ մնամ, իվլիլի լավ ա: Տանն էլ մին մադար քուր ա ինոնմ թողած, քյինամ ա յոր օնում, հորը հարստությունը, վըեսկեն, խազնան էլ լոխ պիրոնմ տըեղ, ինքին ամմեն օր քյինամ վըերս, քվորը թափշուր անում, վըեր հըսարան տոնա լի կյա:

Մին քանի օր քուրը տոնա լի կյամ, մին օր էլ ասում ա՝ տոնա ըմ կլիլական, տըեսնամ հի՞նչ կա, հի՞նչ լի կա: Հըսարան տոնա ա կյամ խլլա քյինամ, տըեսնում մին փոսա մին մարթ ծեն ա տամ, թա՝ քո՛ւրիկ, եք ըստըեղ, պեն ըմ ասում: Ախճիգյը մուտանում ա, տեսնում մին մարթ մին փոսու մաշի վըեր ինգլած. տա թա՝ քո՛ւրիկ, ինձ քու ախսպեր ա շըշկավ թխալ, իստի ըրալ, էսհինչ տըեղը ճար կա, քյինամ պեր քսի կլիխըս, լումբըրու, հինչ ասես, կանեմ: Ախճիգյը քյինամ ա ճարը պիրոնմ, քանին տրա կլիխը, լումբընում, էտ մարթը ըսկըսում ա տըեղեքյ թաքուն ապրելը, ախճիգյըն էլ ամմեն օր, ախսպերը վըերս քյինալան ետը կյամ ա տրա կոշտը, վերը, տահանք սիրահարվում ըն, թաքուն փըսակվում:

Մին քանի ամմես վըեր անց ա կենում, էտ ախճիգյը պատճառեւր ա տըեռնում: Մին օր ախսպերը վըրսըտեղա կյամ ա, քվորն ասում ա՝ հենց ա տի պեն ինի, ինձանան կյեղում ըս: Քուրը թա յանի էս խոր ծմակումը հո՞ւ կա, վըեր տի պեն ինի: Էքյոի օրը տա մարթին ասում ա, վըեր ախսպերը կլնի ա ինգյալ: Մարթը թա՝ եք ախսպորը ըսպանենքյ, մունք ըստըեղ աղադ ապրենքյ: Տա թա՝ տու վըս գյոնդոնմ: Մարթն ասում ա.—Ես օց ըմ տըռնըլական, նի մննեմ տանը մղակեն կլիսեն պատը, վըեր ախսպերը կյա, օզե թա նի մննե, կծըլական ըմ, ըսպանեմ:

Տահանք մինչև էտ պենը պըղբաստում ըն, ախճիզյը մին շատ դաշտանոյ տղա յա պիրհնո՞ւ, թարուն պերո՞ւ անում, պըտատած տանում հըղեցը վըեր քցո՞ւմ, հանցու վըեր ախաղերը կյա յոր օնեւ:

Ախաղերը վըրսըտըեղա վըեր կյամ ա, հըղեցն դրաղան խուխու լացո՞ւ սան ա ըսկանում: Մուտանում ա խտուում, տանում տամ քվորը, քուրը թա՞ իս տրա պահողը շըմ, հիշտեղ տանում ըս, տար: Ախաղերը վըեր շատ զաշանք ա անում, քուրն ասում ա.—Դե լավ, պերալ ըս, պերալ ըս, յոր կոնեմ: Էտ տղան շատ ճելի մըծանում ա, ուրեկանը տըրեկան ա տըրենում: Տա մորուց էլ իմաստում ա ինո՞ւմ ծնված: Արտեն վըեր մին քանի տարե անց ա կենում, դայինն նեստ քյինամ ա վըերս: Իսկ էտ ըխճըկանը մարթը մին օր ա տըրենում, նի մննում տանը մղակեն կլիս պատը, վըեր կնգանն ախաղերը կյա, կծե, ըսպանեւ: Էտ օրը վըրսըտրեղա կյալիս քվորը տղան ասում ա.—Դայի, դայի, նըղացալ ըմ, ինձ ուսերես նըստըցըրու, տար տոն: Դային տղեն ուսերեն նըստըցնում ա, տանում տոն, մղակավը նի մննելիս օցն օղում ա, թա տրա կլիման կծե, եշում ա, տըրենում ուրան տղեն կլոյիս ա առաւը կյամ, կարում չի կծեւ:

Էքսի օրն էլ օցը նի յա մննում մղակեն տակե պատը, վըեր էտ տղեն վըեննան կծե, վըրսըտըեղա կյալիս քվորը տղան համին տըրեղը դայինն ասում ա.—Վըեննը կաց, ըրկե տու վըս ինձ շիլակալ տարալ տոն, օր էլ իս պիտի քեզ շիլակեմ, տանեմ: Դային թա՝ քյինամ պենիտ, ես նըղացած շըմ, համ էլ տու կարել շըս ինձ շիլակես: Տա թա՞ դայի, տա քու պենըտ չի, տու եր իմ իմ շելակը: Դային եր ա ինո՞ւմ տրա շելակը, տա քյինամ ա մըղակավն անց կենում, էս դընեմ: Էլ օցն օղում ա թա տրա վըեննան կծե, եշում ա, տըրենում ուրան տղան, էլ կծում չի:

Տրանա ետն էտ մարթն ուրան կնգանն ասում ա.—Մըեր տըրան կլոյիս ա ինգյալ, պա հինչ ա՞նենքյ: Մոլըհաթ ըն անում, վըեր խորագյին մաշը ճար քցին, ախաղորը ըսպանեն: Ուրենգյիննը վըեր էտ տղան վըրսըտըեղան կյամ ա, քուրը իրեւ աման լըցած խորագյ ա պիրհնո՞ւ, մինը տնո՞ւմ ախաղորը ըռալին, մինը՝ տղեն, մինն էլ ուրան: Ախաղորն ամանը ճար քցած ա ինո՞ւմ: Տղան տըրեղ դայինն դույուղ ա անում, վըեր իստի պեն կա, իմ հար էն օցն ա, վըեր ուզեցալ ա քեզ կծե, էս էլ իմ մար ա, սա յել մին քանի հետե ուզեցալ ա քեզ ըսպանել տա. Եր ես իմ հոր ըսպանեմ, տու վըել քու քումոր: Տա ուրան հորն ա ըսպանում, դային էլ՝ քվորը: Տրանա ետը տահանք թա՞ էլ ըստըեղ մնալի չի, թողենքյ, քյինանք:

Տըեղետ իլրծ-շիլանծը թողում ըն, հղե ինձնմ, վըեր քյինան
օրիշ երգիիր, Քյինանմ ըն, քյինանմ, հսնում մին քըղաքու զրազ,
էտ տղան մին մըեծ ծառ ա պուկում, դային ասում.—Տանենքյ
ժախենքյ ապրենքյ մինչև գործ քըթենալը, Տանում ըն քըղաքումը
ծախում, մին քանի օր յուլա քյինանմ, տրանս ետք հըրցըփորց
անում, թա ըտեղ հու հուրանց ննջամը յոր կոնեւ Մին քանի հոքի
տահանց ասում ըն էս քըղաքեն թաքավըերեն քառասում ննջամը ա
հարկավըեր, վըեր քառասում նորե ամմեն օր տանեն ծմական փադ
պեռնեն, պիրին:

Էտ տղան դայինմ թողում ա մին տան, ինքը քյինանմ թաքա-
վըերեն կոշտը: Թաքավըերը երեսունիննը նույթըրներեն նհետ
տրան էլ ա յոր օնում, մին քանի օր նհըտնեն նորեն տանում ա
փադ պեռնում, պիրում: Մին օր էլ քյինանմ ա թաքավըերեն կոշտը
ասում.—Թաքավըերն ապրած կենա, ամմալ չի կլան, վըեր էտ
երեսունիննը հոքին զարկես օրիշ տրեղ պեն անեն, ես քառասում
նորեն մենակ կըտանեմ պեռնեմ, պիրիմ: Թաքավըերը թա՝ լալ
կինի:

Տա մին քանի օր քառասում նորեն առաջն ըրած տանում ա
պեռնում, պիրում: Մին օր էլ ծմակումը նուրբնեն պեց ա թողում,
ինքը քումավ հնցընում, եր կենում, տըեսնում մին քարուն ճու-
րենուցը լոխմինին փրթած, կովսկըրներեն նստած օտում ա: Բա-
րունին փոնում ա, քառասում նորում փաղը պեռնում, առալը
քցնմ, պիրում քաղաքը: Քըղաքեն ժուղովուրթը լոխ տես ու տես
փախնում ըն, քյինանմ թաքավըերեն ասում.—Էս հինչ խթու մաշ
քցեցեր մըեզ, Թաքավըերն էլ մտածում ա, վըեր սա քշտիս կենա,
կլոխըս ուտըլական ա, լավին էն ա զարկեմ հոմց տըեղ, վըեր ետ
չի կլան: Տրան ծեն ա տամ կոշտը, ասում էսհինշ երգիիրումը տասսը
գովեր ըն ապրում, տահանք ինձ խարչ ըն տամ, տասսը տըոնը-
վան խարչը հալա տուվալ լըն, քյինանմ ինք կալ, պեր:

Տա բարունուր քցնմ ա մին կյում, թաքավըերեն ասում.—Ըսպա-
ներյվուշ, կթողերյ կենա, մինչև ես կյամ: Ասում ա, ինքը հղե
ինձնմ դումլըերեն երգիիրը, տըեսնում տահանք զըզզըներյը կրա-
կեն տիրած, խորագյ իփիլիս, ուրանք էլ կոխկեն նստոտած: Տա
վըեր դուվերեն մուտանում ա, նհանցա մինը թա պա՛հ, էսհինշ
լամ պեն ա, մըթավըետ ա կյամ, զզզընոցումն էլ մըես չի կաւ
Տա էտ դուվին վըեր մեհետ թընթըլոշի յա տամ, օխտը հետ կըլը-
կոնձի յա տամ: Մնացած դուվերն էտ վըեր տըեսնում ըն, վըենը-
ծըռքըրնեն տափան կտրում աւ ծտ ա տըենում դումլըերեն ասում
էսհինշ թաքավըերեն տասսը տըոնըվան խարչը տուվերյ, տանեմ:

Դովերը թա՝ մունք վրել մին թաքավը երու էլ խարջ շընք տամ,
ծրեր թաքավը երը մըզըրա վրել մին խարջ էլլա տիրալ չի. Տա
դուվը երեն առաջն ա անում, տանում հորանց քաղաքը:

Քրդաքեն ժուղովուրթը վըեր տասսը դուվերեն տըեսնում ըն,
վայվըուղը քցում ըն, տհնս կյամ տես ու տեն փախնում: Դովերը
նի յըն մննում քաղաքը: Տաճանց նիփասան, մշմշոցան էլ հավ, հեյ-
գան-պեն լոխ փախնում ըն: Ժուղովուրթը քյինամ ըն թաքավը երեն
կոշտը, թա՝ ամման գլունուղնու, մըեզ էս ցավան ըզադե: Թաքա-
վը երը մին թաճրավ դուվերեն քըմակավը ոփսկավ մարթ ա դար-
կում էտ աղեն կոշտը, վըեր ասե՝ դուվերեն պեց թողե, քյինան:
էտ մարթը քյինամ ա հեռու վըեննը կինում, ծեն տամ, ասում.—
Թաքավը երն ասալ ա՝ դուվերեն պեց թող, քյինան:

Տա դուվերեն պեց ա թողում, քյինամ ըն ուրանց երգիրը:
Տրանա ետը նի յա մննում կյումը, տըեսնում բարուուն ըստակած:
Քյինամ ա թաքավը երեն կոշտը, թա՝ պա քեզ ասալ լըմ բարուուն
ըստաները վուլ: Թաքավը երը թա՝ հինչ ա՞նենքյ, զահմավ պեն տ,
վրել մինն էլլա ոփսկ չի ըրալ մուտանա, ուտելի պեն տա, բարուուը
սոված կացալ ա, ըստակալ: Տա վըեր մեհետ թաքավը երեն վի-
զին թխում ա, կլնիր թոշում ա: Ժուղովուրթը հըվաքիում ըն. ա-
սում՝ տրա պատասխանը տի պիտի ինի: Տաճանք հըրցընում ըն,
թա պա հո՞ւ պիտի թաքավը ինի, էտ տղան թա՝ իմ դայի էս-
հինչ թաքավը երեն տղան ա, թաքավը եր կացած ա, երգիրը մե-
նակ նա կըկարե կառավարե: Քյինամ ա զայսն պիրում թաքա-
վը եր տինում, երգիրը խըզաղվում ա, ամմեն հինչ բուզանում,
ժուղովուրթն ըսկում ըն լավ ապրելը:

